# Fwd: ԳԱՐԴԻԱՆ ՍՊԸ

Ուղարկող <info@prosecutor.am>
Ստացող Ընդհանուր Բաժին <yndhanur.bajin@prosecutor.am>
Ամսաթիվ 2025-02-21 12:48

Գնային առաջարկ_Գարդիան ՍՊԸ.pdf (~3.3 ՄԲ)

-------- Исходное сообщение --------
Тема: ԳԱՐԴԻԱՆ ՍՊԸ
Дата: 2025-02-21 12:45
От: "GSS | Guardian" <gss@guardian.am>
Кому: <info@prosecutor.am>

Հարգելի՛ պարոն Ղազարյան,

Ի պատասխան Ձեր գրության, ներկայացնում
ենք 24-ժամյա 1 պահակակետի պահպանության
գնային առաջարկը:

Հարգանքով՝

Տնօրեն Արամ Գևորգյան

ԳԱՐԴԻԱՆ ՍՊԸ

ՀՀ, ք.Երևան, 0036, Մարգարյան նրբ. 7, տարածք 23

+ (374) 11 555 200

+ (374) 44 555 200

gss@guardian.am

www.guardian.am [1]

Links:
------
[1] http://www.guardian.am/

Հարգանքով,
ՀՀ դատախազության հանրային կապերի բաժին

ՀՀ ք. Երևան, 0010 Վազգեն Սարգսյան փ. 5
Հեռ.՝ +374 (10) 511-527
Էլ. փոստ՝ info@prosecutor.am

ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք № ____ թերթ ___
«21» 02 25

ԳԱՐԴԻԱՆ ՍՊԸ

GUARDIAN LLC

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, 0036
Մարգարյան նրբ. 7, տարածք 23
Հեռ.՝ + (374) 44 555 200
+ (374) 11 555 200
Էլ. Փոստ՝ gss@guardian.am
www.guardian.am

Address: RA, Yerevan, 0036
Margaryan lane 7, #23
Tel.: + (374) 44 555 200
+ (374) 11 555 200
E-mail: gss@guardian.am
www.guardian.am

ք.Երևան «21» փետրվարի 2025թ.

«ԳԱՐԴԻԱՆ» անվտանգության ծառայություն

«ԳԱՐԴԻԱՆ» անվտանգության ծառայությունն իրականացնում է պահնորդային, ինչպես նաև անվտանգության համակարգերի միջոցով պահպանության ծառայություն և հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում գործող առաջնակարգ ընկերություններից մեկը: Ստորև ներկայացնում ենք մեր կողմից մատուցվող ծառայության ընդհանուր նկարագիրը՝

1. Պահնորդային ծառայություն ֆիքսված պահակակետում՝ անվտանգության աշխատակիցների միջոցով, որոնք համապատասխան որակավորում են ստացել հատուկ կրթական հաստատություններում (Բերկուտ, Միաս, Պահապան Արծիվ, Քինգ Մարշալ և ՀՀ ոստիկանության կրթահամալիր): Աշխատակիցների փորձը և մասնագիտական մոտեցումը թույլ են տալիս շուրջօրյա ապահովելու յուրաքանչյուր մասշտաբի և սեփականության ձևի կազմակերպությունների և ձեռնարկությունների արդյունավետ և ամբողջական պահպանություն, երաշխավորելով քաղաքացիների սեփական անվտանգությունը, իրականացնում է անշարժ և շարժական գույքի, ապրանքանյութական արժեքների պահպանությունը, ապահովում է կոմերցիոն և մասնավոր տեղեկատվության գաղտնիությունը, ինչպես նաև մասնավոր ընկերությունների տնտեսական շահերը յուրաքանչյուր ապօրինի ոտնձգություններից: Օբյեկտի պահպանությունն իրականացնելիս անվտանգության աշխատակիցները կարող են օգտագործել լրացուցիչ սարքավորումներ, զենք և հատուկ միջոցներ, ինչպես նաև Guard Tour համակարգ, որը հնարավորություն է տալիս առցանց վերահսկել աշխատակիցների շրջայցերը պահպանվող օբյեկտներում:
Պատվիրատուի ցանկությամբ անվտանգության աշխատակիցները կարող են կրել դասական ոճի կոստյում կամ պահնորդի հատուկ համազգեստ:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

1. Յուրաքանչյուր պահնորդ ուսուցանված է հետևյալ վերապատրաստման ծրագրերով՝
   - Հակահրդեհային անվտանգություն
   - Տարահանման պլան
   - Հսկիչ անցագրային կետի պահանջների իմացություն
   - Անվտանգության անհատական պատասխանատվություն
   - Անվտանգության կանոնների ծանուցում
   - Ավտոմեքենաների զննում
   - Գրավոր զեկույցների պատրաստում
   - Արտակարգ իրավիճակում արագ կողմնորոշում
   - Ֆիզիկական պատրաստվածություն:

2. Պահպանության ծառայություն անվտանգության ահազանգման համակարգերի միջոցով: Ընկերությունում գործող Կառավարման կենտրոնը տագնապի ազդանշան է ստանում՝
   - Ֆիքսված հեռախոսակապի միջոցով
   - GSM/GPRS բջջային կապի միջոցով
   - ID կոնտակտի միջոցով:

   Ազդանշանային համակարգի ցանկացած միացման դեպքում օպերատիվ-հերթապահն անմիջապես տեղեկացնում է արագ արձագանքման խմբերին (ԱԱԽ), որոնք շուրջօրյա շրջայցեր են կատարում իրենց հատկացված տարածքներով ոչ ֆիքսված գրաֆիկով: Արագ արձագանքման խմբերը պարեկային մեքենաներով /համալրված GPS նավիգատոր համակարգով/ մեկնում են պահպանվող օբյեկտ, անկախ նրանից տագնապը կեղծ է, թե ոչ, ձեռնարկում իրադրությանը համապատասխան գործողություններ և անհրաժեշտության դեպքում տեղեկացնում իրավապահ մարմիններին և պատվիրատուին: Դեպքի վերաբերյալ կազմվում է համապատասխան ակտ:

   ID կոնտակտի միջոցով Կառավարման կենտրոն հաղորդվում է ամբողջ համակարգի հետ կապված թերությունները ու անսարքությունները, հոսանքի բացակայությունը, մարտկոցի լիցքավորման և լիցքաթափման ժամանակը և տագնապ ստանալու ճշգրիտ հատվածները (զոնաները):

   ID կոնտակտով ստացված ցանկացած տեղեկատվություն հաշվետվության տեսքով յուրաքանչյուր ժամանակ կարող է ուղարկվել պատվիրատուին (ըստ պատվիրատուի ցանկության):

3. Պահպանության ծառայություն կենտրոնացված տեսահսկման համակարգի միջոցով: Ծառայությունն իրականացվում է IP տեսախցիկների միջոցով, որոնք տեղադրվում են ՀՀ տարածքում գտնվող ցանկացած պահպանվող օբյեկտում և ինտերնետի միջոցով միացվում

են ընկերության Կառավարման կենտրոնին: Ցանկացած վտանգ նկատելու կամ տեսապատկերի կորստի դեպքում օպերատիվ-հերթապահն անմիջապես հայտարարում է տագնապ, որի դեպքում համակարգերի միջոցով մոնիտորի վրա ցույց է տալիս ամենամոտ գտնվող արագ արձագանքման խումբը, որն անմիջապես ուղարկվում է տագնապի վայր (անհրաժեշտության դեպքում մի քանի խմբեր):

Նշված ծառայությունները կանոնակարգվում և վերահսկվում են հետևյալ կերպ՝

- Շուրջօրյա գործող Կառավարման կենտրոն
- Շուրջօրյա, ավտոմոբիլային պարեկային ծառայություն
- Արագ արձագանքման խումբ
- Կորուստների կանխարգելում
- Ծառայության վերահսկում համակարգչային հատուկ ծրագրերի /Axxon Next/ միջոցով
- Ծառայության վերահսկում աոցանց Guard Tour համակարգի միջոցով
- Ծառայության վերահսկում GPS համակարգի միջոցով
- Ծառայության վերահսկում IP տեսախցիկների միջոցով:

Ձեզ ենք ներկայացնում 24-ժամյա 1 պահակակետի /զենքով և առանց զենք/ պահպանության հետևյալ գնային առաջարկը՝

| Հ/Հ | Ծառայության մատուցման վայրը | Ժամ | Պահակակետերի քանակը | Մեկ քանակը մեկ հերթափոխում | Մեկ ընդհ. քանակը | Ծառայության արժեքը | ԱԱՀ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Պահնորդային ծառայություն /առանց զենք/ | 24 | 1 | 1 | 4 | 800 000 | 160 000 | 960 000 |
| 2 | Պահնորդային ծառայություն /զենքով/ | 24 | 1 | 1 | 4 | 1 200 000 | 240 000 | 1 440 000 |

## 1. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. Ծառայության ներկայանալ սահմանված ժամին «ԳԱՐԴԻԱՆ» ՍՊԸ-ի կողմից հաստատված համազգեստով, կոկիկ տեսքով:
2. Կատարել հերթափոխի ընդունում և հանձնում՝ համաձայն հաստատված կարգի:
3. Նախորդ հերթափոխից տեղեկանալ (իր բացակայության ընթացքում) նոր հրահանգների, միջադեպերի մասին:
4. Ստուգել տարածքում տեղադրված կապի և տեխնիկական միջոցների վիճակը:

5. Իմանալ տարածքը, տարածքի բաժանումը ըստ պահակակետերի, տարածքային կառույցները, տարածքում գտնվող գույքը և կրել պատասխանատվություն դրանց անվտանգության ապահովման համար:
6. Ճանաչել դեմքով և անուն ազգանունով պահպանվող օբյեկտի բոլոր ղեկավարներին, իմանալ պահպանվող օբյեկտի առանձնահատկությունները, կառուցվածքը և աշխատանքային ռեժիմը:
7. Իմանալ հսկիչ անցագրային կետի պահանջները՝ համաձայն պահպանվող օբյեկտում գործող կանոնակարգի:
8. Իմանալ պահպանվող օբյեկտ մուտք/ելք գործելու կարգը (աշխատակիցներ, հյուրեր, այցելուներ, և այլն)՝ համաձայն պահպանվող օբյեկտում գործող կանոնակարգի, թույլ չտալ կողմնակի անձանց ներթափանցումը պահպանվող տարածք:
9. Ստուգել և աշխատակիցների հետ ճշտել ներս մտնող այցելուների ինքնությունը՝ գրանցելով համապատասխան մատյանում:
10. Ստուգել և գրանցել ներս մտնող և դուրս եկող ապրանքների առկայությունը և գրանցումներ կատարել համապատասխան մատյանում:
11. Ունենալ պաշտոնատար անձանց ստորագրությունները, ովքեր իրավասու են հրահանգ տալ նյութական արժեքները մուտք/ելք անելու համար:
12. Հետևել պահպանվող օբյեկտում հասարակական կարգի պահպանմանը՝ համաձայն պահպանվող օբյեկտում գործող կանոնակարգի:
13. Ստուգել կրակմարիչների տեխնիկական վիճակը և առկայությունը համապատասխան վայրերում՝ այդ մասին գրառելով զեկույցում:
14. Իմանալ արտակարգ իրավիճակների ժամանակ պահնորդի գործողությունները՝ համաձայն օբյեկտում գործող արտակարգ իրավիճակների պլանի:
15. Գործել համաձայն պահպանվող օբյեկտի հաստատված աշխատանքային ընթացակարգի և վերահսկել դրա ճիշտ կատարումն ու պահպանումը:
16. Պարբերաբար իրականացնել կանոնավոր շրջայց տարածքով և տարածքային կառույցներով՝ այն ամրագրելով համապատասխան տեխնիկական միջոցներով ըստ համապատասխան նշված /հաստատված/ երթուղու:
17. Ժամանակին արձագանքել պահպանվող օբյեկտի ղեկավարության դիտողություններին, առաջարկություններին և անմիջապես տեղեկացնել անվտանգության ծառայության պետին:
18. Զեկուցել Կառավարման կենտրոն անվտանգությանը սպառնացող ցանկացած վտանգ և համապատասխան միջոցներ ձեռնարկել դրանց վերացման համար:
19. Պահպանել ծառայողական գաղտնիքը:
20. Ծառայության առնչվող և աշխատակազմին վերաբերվող բոլոր հարցերը զեկուցել վերադասին:

## 2. ՕԲՅԵԿՏԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՀԱԶԱՆԳՄԱՆ ԵՎ ՏԵՍԱՀՍԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

1. Տագնապ լինելու դեպքում, Կատարողը պարտավոր է հնարավորինս արագ իր պահնորդներից բաղկացած արագ արձագանքման խումբ (այսուհետ՝ ԱԱԽ) ուղարկել պահպանվող Օբյեկտ:
2. Շրջայցերի ժամանակ ուշադիր զննել տարածքը, կնիքների առկայությունը և կայանված տեխնիկան, պարեկություն իրականացնել պահպանվող օբյեկտի ամբողջ տարածքով, նկատելով անվտանգությանը սպառնացող ցանկացած վտանգ համապատասխան միջոցներ ձեռնարկել դրանց վերացման համար և անմիջապես տեղյակ պահել Պատվիրատուին :

«ԳԱՐԴԻԱՆ» ՍՊ ընկերությունն իր գործունեության ընթացքում ձեռք է բերել պատկառելի փորձ պահնորդական, թիկնապահական, ահազանգման, տեսահսկման և պարեկային ծառայությունների ոլորտում և հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում գործող առաջնակարգ ընկերություններից մեկը: Ընկերությունն իրականացնում է ծառայություններ ինչպես Երևան քաղաքում, այնպես էլ ՀՀ տարբեր մարզերում: Ընկերության ղեկավար անձնակազմը համալրված է համապատասխան որակավորում ունեցող բարձրակարգ մասնագետներով, որոնք ունեն տասը տարի և ավել աշխատանքային փորձ համապատասխան ոլորտում, ինչպես նաև ֆիզիկական պատրաստվածությամբ անվտանգության աշխատակիցներով /թիկնապահներով/, որոնք համապատասխան որակավորում են ստացել հատուկ կրթական հաստատություններում (Բերկուտ, Միաս և ՀՀ ոստիկանության կրթահամալիր):

Ընկերությունը հագեցած է բոլոր անհրաժեշտ միջոցներով մատուցելու ամբողջական անվտանգության ծառայություններ՝ ժամանակակից անվտանգության սարքավորումներ և տեխնիկական միջոցներ, ռադիոկապ և հատուկ միջոցներ, տրանսպորտային միջոցներ, ինչպես նաև հատուկ համազգեստ:

Անվտանգության ծառայությունների վերաբերյալ առավել մանրամասն նկարագրությունը Ձեզ կներկայացնենք կողմերիս կողմից սահմանված ընթացակարգով:

Հարգանքով,

Տնօրեն՝ [illegible] Գևորգյան

«ԳԱՐԴԻԱՆ»
"GUARDIAN"
"ГАРДИАН"
01273049